

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
/ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ/ ԲԱԺՆԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչություն/ կողմից 2015թ. ընթացքում հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն ընթացիկ ստուգումներ է անցկացվել մարզի 37 համայնքներում:

ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի 'Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին' թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2015թ. հուլիսի 1-ի դրությամբ:

ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կառուցապատման իարվունքով տրամադրումը և օտարման կարգի հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունվարի 14-ի թիվ 16-ն որոշմամբ սահմանված կարգով համաձայնություն է տրվել համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրման հողաշինարարական գործերին և վարձակալության է հանձնվել 471 հա պետական սեփականության հողամաս, որից 224 հա խոտհարք, 247 հա արոտ, որոնք իրականացվել են մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի աջակցությամբ և անմիջական գործուն մասնակցությամբ:

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման /մարզային հողային պետական տեսչություն/ բաժնի կողմից ՀՀ կառավարության 2010թ. Հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> թիվ 1477-Ն որոշման 1-ին կետի համաձայն հսկողություն է սահմանվել, համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի պարզ գրավոր մինչև 3 տարի ժամկետով տրամադրման և վարձավճարների գանձման նկատմամբ:

Մարզի հողային հաշվեկշռի համաձայն հաշվետու ժամանակահատվածում 2014թ հուլիսի 1-ից 2015թ. հուլիսի 1, մարզի համայնքներում վարձակալության տրամադրված պետական և համայնքային սեփականության հողամասերը ավելացել են 96127 հեկտարով, որոնք այժմ փաստացի կազմում են 112698 հա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով 2015թ. կազմվել և ժամանակավոր սխեմաների միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 15 համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա: 2015թ. միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն է ստացել 14 հողերի օգտագործման ժամանակավոր սխեմա 1 հողաշինարարական գործ ընթացքի մեջ է: 8.1 հա փոխադրվել է բնակավայրերի հողերի կատեգորիա, որից 7.5 հա հասարակական կառուցապատման նպատակով, 0.58 բնակելի կառուցապատման, 0.02 հա ընդհանուր օգտագործման: 0.2 հա հողամաս փոխադրվել է էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, որից 0.17 հա կապի, 0.03 կոմունալ: 4.7 հա փոխադրվել է գյուղատնտեսական նշանակության՝ խոտհարք: 9.46 հա փոխադրվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա, որից 3.26 հա արդյունաբերական օբյեկտների կառուցելու նպատակով, 6.2 հա ընդերքօգտագործման նպատակով: 2.64 հա փոխադրվել է հատուկ նշանակության պաշտպանության նախարարության նոր մարտական դիրքի կառուցման նպատակով: 2.74 հատուկ պահպանվող հողերի՝ հանգստի գոտու կառուցման նպատակով: Հողամասերի կատեգորիաների փոփոխություններից համայնքների բյուջեներ է մուտքագրվել շուրջ 8.9 մլն ՀՀ դրամ:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյան